Հավելված N 287
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի հունիսի 5 -ի N 253-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 18-34.18-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ
Վարչության պետին ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը և Բաժնի պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը
Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1. ապահովում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության մշակման աշխատանքների իրականացումը,
2. ապահովում է Վարչության աշխատողների մասնակցությունը հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,
3. ապահովում է Վարչության աշխատողների մասնակցությունը ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան մշակութային ժառանգության բնագավառին վերաբերող ՀՀ ազգային զեկույցների պատրաստմանը,
4. ապահովում է հուշարձանների պետական հաշվառման աշխատանքները, իրականացնում է վերահսկողություն գործընթացների կատարման նկատմամբ,

կազմակերպում է նոր հայտնաբերված օբյեկտների պահպանության, պատմա-մշակութային արժևորման և նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու գործընթացները, մասնակում է նախարարության փորձագիտական հանձնաժողովի աշխատանքներին,

5. ապահովում է պատմական բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի առաջադրանքների և նախագծերի կազմման աշխատանքների իրականացումը,
6. ապահովում է հուշարձանների կադաստրի կազմման նպատակով հուշարձանների կադաստրային տվյալների ձեռք բերման, գրանցման, անշարժ գույքի վկայականներ ստանալու աշխատանքները,
7. ապահովում է ՀՀ տարածական պլանավորման նախագծերի, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի ուսումնասիրման աշխատանքները, տարածական պլանավորման նախագծերի և գլխավոր հատակագծերի վերաբերյալ վերջնական կարծիքի տրամադրման գործընթացը,
8. ապահովում է ՀՀ համայնքներում իրավաբանական և ֆիզիկական անձանց օտարվող կամ հողի նպատակային նշանակության փոփոխությունների դեպքում հողատարածքներում պատմամշակութային հուշարձանների առկայության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը,
9. ապահովում է պեղումների թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի համաձայնեցման գործընթացները,
10. ապահովում է հուշարձանների հետախուզման և պեղումների ընթացքի հսկողությունը, ըստ անհրաժեշտության, դրանց ուսումնասիրումը,
11. ապահովում է հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերի, առանձին միջոցառումների և դրանց իրականացման ձևերի ու կարգերի մշակման աշխատանքները,
12. ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մշակման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը, միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագերի մշակման աշխատանքները,
13. ապահովում է հուշարձանների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները,
14. ապահովում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ համաձայնություն և եզրակացություն տալու գործընթացը,
15. ապահովում է սահմանված կարգով հուշարձանների փոփոխման և տեղափոխման վերաբերյալ եզրակացությունը, դրանց նախագծային առաջադրանքներին և նախագծերին համաձայնության տալու գործընթացը
16. ապահովում է հուշարձանների պահպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ մոնիտորինգի (վերահսկողություն) իրականացնելու գործընթացը.
17. ապահովում է հուշարձանների շտեմարանների վարման աշխատանքները.
18. ապահովում է հուշարձանների և պատմական միջավայրի անխաթար

պահպանությանն ուղղված աշխատանքների կազմակերպումը, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների, պեղումների հսկողությունը, համակարգում է մասնագիտական տեղազննության և կարծիքի ներկայացման աշխատանքները, հուշարձանները վնասելու կամ քանդելու դեպքերում կանխարգելիչ միջոցների իրականացման աշխատանքները,

19. ապահովում է պատմամշակութային բարձրարժեք հուշարձանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
20. ապահովում է հուշարձանների օգտագործման հանձնման գործընթացները,
21. ապահովում է քաղաքացիների, իրավաբանական անձանց և լրատվական միջոցների հարցումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները:

Իրավունքները՝

- Վարչության մասնագետներից պահանջել՝ ներկայացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանությանն և օգտագործմանը, վերականգնմանը վերաբերող փաստաթղթեր, նյութեր և տվյալներ.
- համապատասխան ստորաբաժանումից պահանջել հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն,
- Վարչության մասնագետներից պահանջել ներկայացնել անհրաժեշտ օրենսդրական հիմնավորումներ,
- մասնակցելու հուշարձանների օգտագործման հանձնման գործընթացների նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովների աշխատանքներին,
- Նախարարին և նախարարի համապատասխան տեղակալին ներկայացնել առաջարկություններ հուշարձանների պահպանությանն առնչվող իրավական ակտերի նախագծերի, այլ փաստաթղթեր մշակելու անհրաժեշտության վերաբերյալ.
- համապատասխան մարմիններից պահանջել նոր հայտնաբերված օբյեկտների պետական հաշվառման փաստաթղթերը,
- մասնակցելու նախարարության հուշարձանների պահպանության բնագավառի խորհրդակցական մարմինների աշխատանքներին, Նախարարի կամ Նախարարի համապատասխան տեղակալի հանձնարարությամբ՝ գերատեսչական մարմինների կողմից ստեղծված հանձնաժողովների աշխատանքներին և այլ կազմակերպվող քննարկումներին,
- ըստ հանձնարարականի՝ մասնակում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստերին
- համապատասխան մարմիններից պահանջել համապատասխան պարզաբանումներ հուշարձանների պահպանական գոտիների սահմանման, մակերեսների չափերի, դրանց օգտագործման պայմանակարգերի վերաբերյալ.
- համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել պարզաբանումներ, քարտեզագրական նյութեր և այլ անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացված

փաստաթղթերի վերաբերյալ.

- համապատասխան մարմիններից ստանալ հուշարձանների և դրանց տարածքների գույքային գրանցման կադաստրային տվյալների վերաբերյալ տեղեկատվություն.
- համապատասխան մարմնի և նախագծային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրականացնել մասնագիտական քննարկումներ հուշարձանների պահպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ.
- հնագիտական ուսումնասիրությունների թույլտվության տրամադրելու համար համապատասխան կազմակերպություններից պահանջել ապահովել նախատեսված հնագիտական ուսումնասիրությունների անհարժեշտ փաստաթղթակազմը և բովանդակային լիարժեքությունը,
- Վարչության տարածքային գործունեության համակարգման բաժինների մասնագետներից պահանջել հետախուզման և պեղումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը,
- համապատասխան ստորաբաժանումներից պահանջել մասնագիտական հիմնավորումներ հուշարձանների փոփոխության և տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ,
- պահանջել ապահովելու հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- համապատասխան մարմիններից պահանջել հուշարձանների և դրանց պատմական միջավայրում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, հաշվետվություններ և զեկուցագրեր՝ անվտանգությունն ապահովող միջացառումներ ձեռնարկելու նպատակով,
- համապատասխան մասնագիտական ստորաբաժանումներից պահանջել՝ ներկայացնել տեղեկատվություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու համար առաջարկված հուշարձանների վերաբերյալ,
- հուշարձանների օգտագործման հանձնման, հուշարձանների օգտագործման ձևի, նպատակի կամ բնույթի փոփոխման առաջարկությունների վերաբերյալ համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ կազմակերպել քննարկումներ, ամփոփում և եզրակացություն տալ մասնագիտական առաջարկությունների վերբերյալ,

Պարտականությունները՝

- պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորման համար ներկայացնել առաջարկություններ,
- Վարչության մասնագիտական աջակցությունը ապահովել հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,
- համակարգել հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի կազմման, թողարկված նախագծերի ուսումնասիրության աշխատանքները, սահմանված կարգով կազմակերպել դրանց համաձայնեցման և հաստատման գործընթացները,

- ապահովել հուշարձանների պահպանության բնագավառին վերաբերող տեղեկատվությունը ՀՀ ազգային զեկույցներում ներառելու համար,
- ապահովել հուշարձանների պահպանության գործընթացներին վերաբերող փաստաթղթերի հաստատումը,
- ապահովել հուշարձանների մասին տեղեկատվության մատչելիությունը,
- ապահովել ՀՀ գերատեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման և կարծիքների ներկայացման աշխատանքները,
- իրականացնել հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման գործի կազմակերպման աշխատանքների համակարգումը,
- ներկայացնել օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան փաստաթղթեր,
- իրականացնել նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու գործընթացը՝ նոր հայտնաբերված օբյեկտներին,
- պահպանական գոտիների նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթացների նկատմամբ իրականացնել հսկողություն,
- ներկայացնում է առաջարկություններ Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,
- ապահովել մասնագիտական կարծիքի տրամադրումը համապատասխան մարմիններին՝ ներկայացված նախագծերի առաջադրանքների և նախագծերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ,
- կազմակերպել կադաստրային տվյալների ձեռք բերման, գրանցման, անշարժ գույքի վկայականներ ստանալու աշխատանքները,
- ապահովել տարածական պլանավորման նախագծերի, համայնքների գլխավոր հատակագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրումը համապատասխան մարմիններին, անհրաժեշտության դեպքում մասնակցել դրանց հաստատման ուղղությամբ կազմակերպված քննարկումներին,
- ապահովել համապատասխան մարմիններին հողաշինարարական գործերի վերաբերյալ մասնագիտական կարծիքների տրամադրումը՝ սահմանված ժամկետում,
- մասնակցել միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի նիստերում հետախուզման և պեղումների հաշվետվությունների, հայտերի և թույլտվությունների տրամադրման քննարկմանը և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնել,
- հուշարձանների հետախուզումը և պեղումները դադարեցնելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ, եթե դրանք վնասել կամ կարող են վնասել հուշարձանը,
- հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերը ուսումնասիրել, ապահովել ծրագրերի իրականացման գործընթացները և ներկայացնել առաջարկություններ,
- պետական բյուջեի, միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի մշակման համար ներկայացված փաստաթղթերը և տեղեկատվությունը ուսումնասիրել և ներկայացնել

համապատասխան մասնագիտական առաջարկություններ,

- հուշարձանների բնագավառի կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,
- ուսումնասիրել հիմնավորումները և ներկայացնել առաջարկություն հուշարձանների փոփոխման և տեղափոխման գործընթացների իրականացման վերաբերյալ,
- հսկողություն ապահովել հուշարձանների պետական հաշվառման տվյալների և նորահայտ հուշարձանների, պահպանական գոտիների կազմման, համաձայնեցման և հաստատման, հետախուզման և պեղումների տվյալները շտեմարաններում ներառելու, ամբողջական տեղեկատվության փաստագրումն ապահովելու նպատակով,
- իրականացնել համապատասխան միջոցառումներ հուշարձանների վնասման և քանդման դեպքերը կանխելու, ամրակայման, նորոգման, վերկանգնման, տարածքների բարեկարգման աշխատանքները և պեղումները դադարեցնելու ուղղությամբ՝ օրենսդրությամբ սահմանված հուշարձանների և պատմական միջավայրին հասցված վնասը վերականգնելու միջոցառումներ ապահովելու համար,
- ուսումնասիրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում հուշարձանների ընդգրկման վերաբերյալ հիմնավորումները և ներկայացնել առաջարկություն,
- ուսումնասիրել հուշարձանների օգտագործման հանձնման առաջարկությունները, դրանց անվտանգությունն ապահովելու նպատակով ներկայացված հիմնավորումները և ներկայացնել առաջարկություն դրանք օգտագործման հանձնելու վերաբերյալ,
- ապահովել տեղեկատվության ճշգրտությունը և համապատասխանությունը օրենս-դրության դրույթներին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ և արվեստ
2	**Ոլորտ**	Ճարտարապետություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ճարտարապետություն և քաղաքաշինություն	Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն	Պատմություն և հնագիտություն
4	**Մասնագիտություն**	Ճարտարապետություն	Պատմություն	Պատմություն կամ հնագիտություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3.Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձ

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետեցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Կոնֆլիկտների կառավարում:

4.Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: